

գաւառիւն: Տիրոջ հարաւային մասերում ընականաբար իտալական ազգաբնակութիւնն է գերակշռում, իսկ մնացած մասերում գերմանականը: Վաղուց է որ Աւստրիայի իտալացիները ձգտում էին իտալական համալսարան ունենալ. սակայն հարստութեան կառավարութիւնը չուզեց մի ամբողջ համալսարան տալ իտալացիներին, այն էլ նրանց ցանկացած Տրիեստ քաղաքում, ուր գերակշռող տարիւր իտալացին է, այլ, մասնակի զիջում անելով, որոշեց լոկ իտալական իրաւաբանական մի ֆակուլտետ բանալ գերմանական Ինսպրուկ քաղաքում, ուր արդէն գոյութիւն ունի գերմանական համալսարան: Բայց գերմանացիք չուզեցին միեւնոյն քաղաքում, թէկուզ համալսարանից տարբեր շինութեան մէջ, տեսնել իտալական ֆակուլտետ: Տեղի ունեցան փողոցային ցոյցեր, կռիւներ, միջամտեց զօրքը, եղան վիրաւորածներ և մի սպանուած. գերմանացի ազգասէրները ներս խուժեցին իտալական ֆակուլտետի շինութիւնը և ամեն բան ջարդուփշուր արին: Եւ դեռ այդ բաւական չէ. մինիստր Կեօրքերին հայհոյում են, որովհետեւ նա համարձակուած է գերմանական տիրապետող դրութիւնը խախտել, ինչ-որ զիջումներ անելով Աւստրիայի սահմաններում ապրող միւս ազգութիւններին:

Այն, դեռ ևս երկար ժամանակ բռնի ոյժն է որոշելու իրաւունքը միջազգային կեանքում...

Լ. Ս.

Հոկտ. 8

Կիլիկիոյ ս. կաթողիկոսը Պոլսում.— Կայս. բարեհաճ Իրատէ մը արտօնած ըլլալով Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսին Պոլիս գալը, Ն. Ամենապատուութիւնը սեպտ. մէկին մեկնեցաւ. Հալէպէն, և Մէրսին-Իսկէնտէրունի ճամբով սեպտ. տասնին հասաւ Իզմիր, ուր արժանի ընդունելութեամբ մը պատուուեցաւ: Իզմիր երեկիւններէն բաղկացեալ պատգամաւորութիւն մը, ի գլուխ ունենալով Պատր. Փոխանորդ Տ. Դանիէլ վարդապետը, բարի գալուստ մաղթեց իրեն, և այդ առթիւ ծանօթ հրապարակագիր Գէորգ էֆ. Պուպլի ուղերձ մը կարդաց Իզմիրի ամբողջ Հայ հասարակութեան կողմէ:

Ս. Կաթողիկոսին Պոլիս մուտքը, սեպտ. 14-ին, շատ սիրալիւր ու հանդիսաւոր եղաւ: Պատրիարքարանի կողմէ կարգուած մասնաւոր պատգամաւորութիւն մը, Գարամանեան էֆ.-ի մէկ շոգեմակոյկով մինչև Լոյտի Մարիա Թէրէզա շոգենաւը երթալով, բարի գալուստ մաղթեց և Ն. Ամենապատուութիւնը առաջնորդեց քարափ՝ ուր արդէն ստուար բազմութիւն մը հաւաքուած էր: Ն. Ամենապատուութիւնը իրեն հետևող ունէր

Հալէպ-Այնթապի Առաջնորդ Տ. Կարապետ Մ. վարդապետը, Տ. Վաղարշապէ վարդապետ Արշակունին, Մանուկ սարկաւազը, և Իսկէնտէրունի երեւիլներէն Գառնիկ էֆ. Գույումէեան: Վեհ. Կայսրը, բարեհաճած էր հրամայել որ Իր Անձնական Դանձէն հոգացունին ճամբորդութեան ծախքերը:

Բարափ ելլելէն անմիջապէս վերջ, Ն. Ամենապատուութիւնը կառքով Մայր Եկեղեցի ուղղուեցաւ, ուր գոհարանական աղօթքներ ըրաւ Վեհ. Կայսեր արեւատութեան համար, և շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած ընդունելութեան մասին: Յետոյ առաջնորդուեցաւ Երուսաղէմատուն, ուր Տ. Գէորգ Սըրբազան ամէն պատրաստութիւններ տեսած էր, վայելուչ կերպով պատուասիրելու համար Սըրբազան հիւրը որ Պոլիս գտնուած միջոցին Երուսաղէմատուն միայն պիտի մնայ: Ն. Ամենապատուութիւնը հոն ընդունեց Ս. Պատրիարքին այցելութիւնը և ուրախ ու համակիր տեսակցութենէ մը վերջ փոխադարձ այցելութիւն տուաւ անոր, Պատրիարքարանի մէջ, Իրիկուան, ընկերացութեամբ Ս. Պատրիարքին, Երուսաղէմի պատր. Փոխանորդ Սըրբազանին և եկեղեցական ու աշխարհական ուրիշ հետևորդներու, Կայս. Պալատ գնաց և ջերմաջերմ ժաղթանքներ ըրաւ Ն. Կ. Վեհափառութեան արեւատութեան համար: Կայս. Պալատան Ա. սենեկապետ Բարձր. Հաճի Ալի փաշա, Ս. Կաթողիկոսին երեստադիտական ու հաւատարմական զգացումները մատոյց յոտս Վեհ. Սուլթանին որ Կայս. Պալատան Ա. քարտուղար Բարձր. Թահսին փաշայի միջոցաւ բարեհաճեցաւ Իր Կայս. գոհունակութիւնը յայտնել: Ս. Կաթողիկոսը, կրկին և կրկին բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սուլթանին արեւատութեան համար, վերադարձաւ Երուսաղէմատուն:

Ինչպէս յայտնի է, Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոսը 1849-ին ծնած է Խարբերդի Եղեգի գիւղին մէջ: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1885-ին, Կաթողիկոս ընտրուեցաւ 1902 հոկտեմբեր 12-ին: Վերջին անգամ Կ. Պոլիս եկած էր տասերկու տարի առաջ, ի դարձին Ս. Էջմիածնէ, ուր իբր պատգամաւոր մասնակցած էր արդի Ս. Հայրապետին ընտրութեան: Բարձրահասակ, ջղուտ, առոյգ ու թուխ՝ կատարեալ համակրութիւն մը կը ներշնչէ մասնաւորաբար իր անոյշ լեզուով և ժպտալից դէմքով. պարզ ու վայելուչ շնորհալիութեամբ մը կը տանի իր պաշտօնին բարձրութիւնը, պատկառազրու անպէս, ինչպէս եղած են մեր հին եկեղեցականները:

Սեպտ. 17-ի ուրբաթ օրը, Սէլամլըքի հանդէսէն վերջ, Ն. Ամենապատուութիւնը պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու, և արժանացաւ Կայսերական Բարձր գնահատման,

ինչպէս նաև Ա. կարգի Օսմանիյէ պատուանշանիւ Այդ բարեղէպ առթիւ, Տ. Սահակ Կաթողիկոս կարգաց երախտագիտական Ուղերձ մը, որով իր և իր հօտին հաւատարմական զգացումներն ու սրտաբուղիս բարեմաղթութիւնները մատոյց յոտս Կայս. Գահոյից, Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ հետեւեալ կերպով պատասխանել Ն. Ամենապատուութեան Ուղերձին.

«Հաւատարմական յայտարարութիւններէդ յոյժ գոհ եմ: Արդէն լսած էի, և Հալէպի կուսակալն ալ ծանուցած էր քու անձնութիւնդ, և քու ժողովրդեանդ տուած բարի խորհուրդներդ ու խրատներդ: Ինչպէս իմ հաւատարմիս՝ Պատրիարքին՝ ուղղամտութիւնը, այնպէս ալ քու ուղղամտութիւնդ իմ Կայսերական գոհունակութեանս արժանացած է: Վստահ եմ որ պիտի շարունակես նոյն ուղիդ շաւղին մէջ, և բարի խրատներ շարունակ պիտի տաս ժողովուրդիդ: Բոլոր ժողովուրդիդ հաղորդէ իմ Կայսերական գոհունակութիւնս և բարենքս»:

Նոյն օրը, Ս. Կաթողիկոսին ընկերակցած էին Ս. Պատրիարքը, Պոսոյ և Երուսաղէմի Փոխանորդ Սրբազանները, Տ. Կաթապետ, Խապահան Տ. Ներսէս, Պապահան Տ. Եղնիկ և Տ. Վաղարշակ վարդապետները, Մանուկ սարկաւազ, Ա. գործակատար Արիս էֆ. Ֆէսճեան և Գառնիկ էֆ. Գուլումճեան: Ս. Կաթողիկոսին Կայս. Պալատ գտնուած միջոցին, Բարձր. Թահսին փաշա հաղորդեց թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Ն. Ամենապատուութեան հետևորդ եկեղեցականներու և աշխարհականներու շնորհիւ Օսմանիյէ ու Մէճիտիէ պատուանշաններուն զանազան կարգերն ու աստիճաններու Մասնաւորաբար Ա. կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուած է Պոսոյ Պատր. Փոխանորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեանի, և Բ. կարգի Մէճիտիէ պատուանշան՝ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ եպիսկ. Երէցեանի: Նաև Իւլայի Բ. աստիճան՝ Պատրիարքարանի Ա. գործակատար Վսեմ, Արիս էֆ.-ի: Մեր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները՝ Կայս. այս Բարձր Շնորհներուն արժանանալուն համար: Կայսերական այս բարեհաճ ընդունելութեան լուրը Կիլիկիոյ թեմականներուն հեռագրուած ըլլալով, բովանդակ ժողովուրդը խռոնբրամ եկեղեցիները լեցուեր և սրտազին բարեմաղթութիւնները ըրեր է Վեհ. Սուլթանին համար: Քանի օրէ ի վեր Կիլիկիոյ բոլոր թեմերէն, դաւառային առաջնորդներէ, ինչպէս նաև եկեղեցական ու աշխարհական ծանօթ անձնաւորութիւններէ շնորհաւորական հեռագրեր կը հասնին Երուսաղէմատուն, և խնդակցութիւն կը յայտնեն Ս. Կաթողիկոսին՝ Կայս. Շնորհաց արժանանալուն առթիւ: Ն. Ամենապատուութիւնը այդ առթիւ ընդունեց նաև Կեդր. Վար-

չութեան անդամներուն, պետական պաշտօնատարերու, կրօնական դասուն, աշխարհական երեւելիներու, ինչպէս նաև մայրաքաղաքի բոլոր քրիստոնեայ հասարակութեանց հոգևոր պետերուն կողմէ՝ Երուսաղէմատուն ղրկուած ներկայացուցիչներու շնորհաւորութիւնները:

Ս. Կաթողիկոսը, սեպտ. 18-ին, ընկերակցութեամբ Ս. Պատրիարքին, Տ. Գէորգ Սրբազան Երէցեանի, Տ. Կարապետ վարդապետի, Ա. գործակատար Արիս էֆ.-ի և Գույումճեան Գառնիկ էֆ.-ի, Բ. Դուռը երթալով այցելութիւն տուաւ Մեծ. Եպարքոս Բարձր. Ֆէրիտ փաշայի, Ներքին գործոց նախարար Բարձր. Մէմուռ փաշայի, Արտաքին գործոց նախարար Բարձր. Թէվֆիգ փաշայի, Պետական Խորհրդոյ նախագահ Բարձր. Սայիտ փաշայի: Նոյն օրը այցելեց նաև Դատական գործոց նախարար Բարձր. Ապիրըրահման փաշայի, և Վսեմ. Միւսթէշարին, ինչպէս նաև Կրօնից տեսուչ Վսեմ. Զիվէր պէյի: Յաջորդ օրը, ընկերակցութեամբ Տ. Գէորգ Սրբազանի, Տ. Կարապետ վարդապետի, Ա. գործակատար էֆ.-ին և Գույումճեան էֆ.-ի, այցելեց Բարձր. Շէյխ-իւլ-Իսլամ էֆ.-ին, Սպարապետ Բարձր. Րիզա փաշայի, Կրթական նախարար Բարձր. Հաշիմ փաշայի, Տէֆթէրխանէի վերատեսուչ Բարձր. Զիյա փաշայի, Էվզաֆի նախարար Բարձր. Թուրխան փաշայի և Ոստիկանութեան նախարար Բարձր. Շէֆիգ փաշայի: Բոլոր այս բարձրաստիճան նախարարներ շատ սիրալիր ու յարգական ընդունելութիւն մը ըրին Ն. Ամենապատուութեան, և ղինքը շնորհաւորեցին՝ Կայս. շնորհներու արժանացան ըլլալուն համար: Ս. Կաթողիկոսը այցելեց նաև Եմտական և Հանրօգուտ Շինութեանց նախարարներուն, բայց Նոցին Բարձրութիւնները իրենց պաշտօնատեղին գտնուած չըլլալով, իր այցաքարտը թողուց: Բոլոր նախարարներն ալ փոխադարձաբար իրենց այցաքարտերը ղրկեցին Երուսաղէմատուն՝ Ն. Ամենապատուութեան:

Որոշուած է Մայր եկեղեցւոյ Ս. Խաչի տաճարին աջակողմեան դասուն մէջ կանգնել Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսին Աթոռը: Ն. Ամենապատուութիւնը՝ եկեղեցի իջած օրերը, ժամերգութեանց պահուն հոն պիտի կանգնի, և եթէ պատարագել ուզէ՝ զգեստաւորուած պիտի առաջնորդուի Մայր Տաճարը: Մասնաւոր հետեւալ տեղեկութիւնները կը հրատարակէ հայրապետական Աթոռին նկատմամբ. — «Գեղարուեստական խիստ նուրբ և թանկագին կերտուած մըն է, հանգուցեալ Գազաղ Ամիրայի առատաձեռնութիւններէն, որ կը մնար Մայր եկեղեցւոյ զանձարանին մէջ, և որ նորոգուեցաւ այս առթիւ: Երկու մէթր բարձրութիւն ունի աթոռը, որ զրու-

ագուած է ամբողջ ու ոսկեզօծուած: Յատակը կահաւորուած է մետաքսապատ թաւիշով: Երկու յենարաններուն վրայ՝ ճիշդ Ս. Կաթողիկոսին ձեռքը կռթնցնելիք տեղը, մէյ մէկ գունտ կայ ոսկեզօծ, նոյնպէս ալ կռնակի յենարանին աջուծախ կողմերը երկու գունտեր: Կռնակի յենարանին ճիշդ կատարը կը փայլի ոսկեքանդակ Կաթողիկոսական չաթալ թազը, շրջապատուած նկարագեղ եմիֆորոնէ մը: Իսկ չաթալ թազը կը պճնեն Հովուապետական Ասան և օձագլուխ գաւազանը: Հնագէտ մը Մայր եկեղեցի այցելութեան առթիւ 300 ոսկի գնահատած է այս Աթոռը: Իսկ Կաթողիկէն հետեւալ կերպով կազմուած է. Հայրապետական Աթոռին չորս կողմը չորս սիւններ հաստատուած են, որուն աջուծախ կողմերը 2,80 մէթր բարձրութեամբ, երկու գեղակերտ և ոսկեդրուագ փեղկեր զետեղուած են, ճիշտ ծայրը վեր առնուած վարագոյրի ձևով, որուն ծոպերը մասնաւոր չքեղութիւն մը կու տան: Այս չորս սիւններուն ու երկու փեղկերուն վրայ զետեղուած է քառակուսի գլուխ մը 1,22 մէթր լայնքով: Իւրաքանչիւր քառակուսին գլուխը մէյ մէկ փոքրիկ Կաթողիկէներ կան. իսկ կենդրոնին վրայ զետեղուած է Իշման տեղի գմբէթին արեւելեան ձևովը, գմբէթ Կաթողիկէ մը, որուն գագաթը կը փայլի շքեղ խաչ մը: Կաթողիկէն ունի ութը խորանաձև դռնակներ, որոնք ալ աւելի վեհութիւն մը կու տան անոր ընդհանուր կազմուածքին: Կաթողիկէին գոյնը կաթնաթոյր է և ոսկեզօծ: Գետինէն մինչև խաչին գլուխը բարձրութիւնն է 4½ մէթր. իսկ պատուանդանները, որոնց վրայէն Աթոռ պիտի բարձրանայ Ս. Կաթողիկոսը, երեք աստիճանէ կը բաղկանան:

Սուրհանդակ ալ հետեւալը կը գրէ Ս. Կաթողիկոսին հռուապետական գաւազանին համար. — «80-90 տարուան հնութիւն մըն է և նուիրուած է Սոոյ վանքին՝ յաւերժայիշատակ Դաղէզ Յարութիւն պմիրային կողմէ: Այդ գաւազանը, համակ արծաթեայ, ոսկեզօծ և գեղակերտ է: Վրան գունտ մը կայ, և շուրջը կը պատկերացնէ Ս. Երրորդութիւնը, առանձինն առանձինն, որոնց շուրջը նկարուած են բազմաթիւ հրեշտակներ գեղակերտ: Դժբաղդաբար այդ գաւազանին մէջի փայտը կոտրած ըլլալով, Պոլսոյ մէջ պիտի նորոգուի: Ս. Կաթողիկոսը առաջին առթիւ եկեղեցի իջնելուն՝ պիտի կրէ այդ Հովուապետական գաւազանը»:

Տ. Սահակ Կաթողիկոսի Պոլիս գտնուիլը առիթ մը պիտի ըլլայ որ կարող ազգայիններ նիւթապէս ալ օժանդակեն Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին, որ նիւթական շատ անձուկ կացութեան մը մէջ կը գտնուի: Արդէն իսկ քանի մը

նախնական խոստումներ եղած են Ն. Ամենապատուութեան, խոստումներ զորս կը յիշատակենք հոս, մաղթելով որ գործադրութեան գրուին ու մանաւանդ օրինակ դառնան ուրիշ ազգայիններու.—Այսպէս՝ Տատեան բարեյիշատակ Պօղոս Պէյի որդին՝ Յակոբ Պէյ, Այ-Սթէֆանոյի մէջ ունեցած մէկ ընդարձակ ագարակը պիտի կտակէ եղբւր Սոյ վանքին՝ Վսեմ. Աբիկ էֆ. Ունճեան խոստացեր է կարևոր գումար մը նուիրել՝ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին կրթական պէտքերուն ի նպաստ: Իզմիրէն ալ՝ Գերովլէ էֆ. Թօփալեան՝ Տ. Սահակ Կաթողիկոսի ժամանման առթիւ Մարիա-Թէրէզա շոգենաւը երթալով, պատրաստակաւութիւն յայտնել է տարեկան 120 ոսկիի գումար մը յատկացնելու Կիլիկիոյ թեմերուն կարօտ վարժարաններուն:

Սեպտ. 23-ին՝ Տ. Սահակ Կաթողիկոս՝ իրեն նկատմամբ ցոյց տրուած Կայս. Բարձր համակրութեան համար շնորհակալութիւն յայտնելու նպատակով, Կայս. Պալատ դնաց և ընդունուեցաւ Ա. Քարտուղար Բարձր. Թահսին փաշայի կողմէ, որուն միջոցաւ արժանացաւ Կայս. բարեններու և մեծարանքներու: Ն. Ամենապատուութեան կ'ընկերանային Տ. Գէորգ Էպիսկ. Երէցեան և Գառնիկ էֆ. Գույումճեան: Ն. Ամենապատուութիւնը ծանոյց թէ իր՝ Վեհ. Սուլթանին կողմէ ընդունելութեան արժանացած ըլլալը մեծ ուրախութիւն պատճառած է բոլոր Կիլիկիոյ թեմօրէից ժողովրդեան և թէ աղօթքներ եղած են Ն. Կայս. Վեհափառութեան արեւշատութեան համար: Բարձր. Թահսին փաշա շատ սիրալիկ ընդունելութիւն մը ըրաւ Ս. Կաթողիկոսին, և յայտնեց Վեհ. Սուլթանին գոհունակութիւնը:

Այս կիրակի, 26 սեպտ., Ն. Ամենապատուութիւնը իր առաջին քարոզը պիտի խօսի Մայր Եկեղեցւոյ մէջ:

(«ԾԱՂԻԿ»)